

ԱՌԱՋԱԲԱՆ

Ներկա հասորմերի մեջ հավաքված փաստաթղթերը ներկայացնում են Վանի, Կարինի, Բիթլիսի, Տիգրանակերտի, Խարբերդի նահանգներում և Պարսկահայքում թուրքերի կողմից իրականացված կոտորածների պատկերը:

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Արևմտյան Յայաստանը բաժանված էր նահանգների (Վիլայեթների): Վանի, Բիթլիսի (Բաղեշի), Էրզրումի (Կարսո), Խարբերդի, Դիարբեքիրի (Տիգրանակերտի), Սեբաստիայի: Յայության հոծ զանգված էր բնակչում Տրավիզոնի և Թուրքիայի մյուս նահանգներում:

Վանի նահանգի տարածքը 33,6 հազար կմ² էր՝ բաժանված 2 գավառի՝ Վանի և Յաքյարիի:

Վանի գավառի գավառակներն էին՝ Արծեն-Ալջավազ, Արճեշ, Բերկրի, Գյավաշ (գյուղախմբերը՝ Կարծկան, Սոլս, Վերին Կարկառ), Մահմուդի, Նորդուզ (1913-ից Մամուրեթ ուր Ռեշատ), Շատախ, Վան (Վան-Տուսա, Արճակ, Թիմար և Յայոց ձոր գյուղախմբերը): Յաքարիի գավառակներն էին՝ Աղբակ, Գյավառ, Խոշաբ, Շամդինան, Զուլամերկ:

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Վանի նահանգում բնակել է շուրջ 485 հազար մարդ (հայ, քուրդ, ասորի, թուրք, եղողի, հրեա, կովկասյան լեռնականներ, գնչու և այլն): 1870-1880-ական թթ. հայերի թիվը 250-300 հազար էր (բնակչության շուրջ 60%-ը): Սակայն միայն 1894-1896թթ. կոտորածներն ու արտագործը շուրջ 50 հազարով կրծատել են Վանի նահանգի հայ բնակչության թիվը: Այդուհանդերձ, ընդհուպ մինչև Առաջին համաշխարհային պատերազմը, հայերը կազմել են տեղի ամենամեծաթիվ էթնիկ. տարրը՝ 210 հզ. մարդ (շուրջ 43%):

Բիթլիսի (Բաղեշի) նահանգը՝ Օսմանյան կայսրության վարչատարածքային միավոր Արմտյան Յայաստանում, Բիթլիս (Բաղեշ) կենտրոնով, ստեղծվել է 1879-1880 թվականներին: Այն նախկինում ընդգրկվել է Վանի, Էրզրումի և Դիարբեքիրի նահանգների մեջ: 1909 թ. նահանգը ուներ չորս գավառ՝ Բիթլիս, Սղերդ, Մուշ, Գենչ, տարածությունը 27100կմ²:

Բիթլիսի գավառի գավառակներն էին՝ Խլաթ, Բիթլիս, Դատվան (Դահվա), Ազնվածոր (Գյողալդարա), Տատիկ, Բայիկ, Մոտկան, Խիզան: Սղերդ գավառի գավառակներն էին՝ Սղերդ, Խարզան, Էրուհ, Բարվարի, Շիրվան: Մուշ գավառի գավառակներն էին՝ Սանազկերտ, Բուլանըխ, Վարդո, Մուշ, Սասուն: Գենչ գավառի գավառակներն էին՝ Գենչ, ճապաղջուր, Խուլզի:

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին նահանգն ուներ մոտ 500 հազար բնակիչ: 1882թ. նահանգն ուներ 250 հազար հայ բնա-

կիչ, որոնց թիվը զգալիորեն նվազել է 1895-1896թթ. հայկական կոտորածների և դրանց հաջորդած արտագաղթի հետևանքով: Այնուամենայնիվ 1914թ. Բիթլիսի նահանգում ապրում էր մոտ 240 հազար հայ: Բիթլիսի նահանգում բնակվում էին նաև քրդեր, թուրքեր (հիմնականում քրդական ծագմամբ), ասորիներ:¹

Երգրումի (Կարճո) նահանգը՝ Օսմանյան կայսրության վարչատարածքային միավոր Արևմտյան Հայաստանում, Երգրում կենտրոնով, կազմավորվել է 1514-1534 թվականներին:

Երգրումի նահանգը Արևմտյան Հայաստանի հայաշատ նահանգներից էր: Այն բաղկացած էր Երգրումի (Երգրումի, Բաբերդի, Դերջանի, Բասենի, Սպերի, Թորթումի, Կեսկիմի, Խնուսի, Քղողիի գավառակներով), Երգնկայի (Երգնկայի, Կամախի, Կերձանիսի, Ղուզուշանի, Կուրուչայի գավառակներով) և Բայազետի (Բայազետի, Ալաշկերտի, Դիաղինի, Կարաքիլիսեի, Անթափի կամ Դուբաղի գավառակներով) գավառներից: Նահանգի հայ բնակչության թիվը պատերազմի նախօրյակին կազմում էր ավելի քան 200 հազար:²

Խարբերդի (Մամուրեթ ուլ Ազիզի) նահանգը՝ Օսմանյան կայսրության վարչատարածքային միավոր Արևմտյան Հայաստանում, կենտրոնը՝ Խարբերդ, 1867թ. Մեզիրե: Ստեղծվել է 1847թ., Դիարբեքիրի, Մերաստիայի և Մարաշի նահանգերից առանձնացված գավառներից: 1913-ին ուներ երեք գավառ՝ Դերսիմ (Խոզաք, Կզըլքիլիսա կամ Նազըմին, Մեծկերտ կամ Մազկերտ, Չարսանջակ, Չմշկածակ, Օվազըկ գավառակներով), Մամուրեթ ուլ Ազիզ (Ակմ, Արարկիր, Խարբերդ, Կապան-Մաղեն, Փութուրկե կամ Շիրո գավառակներով) և Մալաթիա (Աղջաղաղ, Բեհեսի, Ջիսի-Մանսուր կամ Աղջաման, Մալաթիա, Քյախրա գավառակներով): Տարածությունը՝ 37800 կմ²:

20-րդ դարի սկզբին ուներ ավելի քան 575 հազ. բնակչություն: Դայերը միշտ կազմել են նահանգի բնակչության ամենաստվար մասը: Խարբերդի նահանգի հայերը մեծ կորուստներ են կրել 1894-1896թթ. կոտորածների ժամանակ: 1912թ. նահանգում ապրում էր 204 հազ. հայ (35,4%): Կային նաև քրդեր (հիմնականում կզըլքաշներ), թուրքեր, ասորիներ, հույներ:

Դիարբեքիրի (Տիգրանակերտի) նահանգը՝ Օսմանյան կայսրության վարչատարածքային միավոր Արևմտյան Հայաստանում, Դիարբեքիր կենտրոնով: 20-րդ դարի սկզբին ուներ երեք գավառ՝ Դիարբեքիր, Արդմի կամ Արդանա-Մաղեն և Մարդիմ: Տարածությունը 47220 կմ²:

¹Տես Հայկական համառոտ համրագիտարան, հ.1, էջ 531-532:

²Տես Հայկական համառոտ համրագիտարան, հ.2, էջ 240-241:

20-րդ դարի սկզբին ուներ մոտ 470 հազ. բնակչություն (իայեր, ասորիներ, քրդեր, թուրքեր, հույներ, հրեաներ և այլն): 1880-ական թվականների սկզբին Դիարբեքիրի նահանգում ապրել է մոտ 150 հազ. հայ, սակայն նրանց թիվը խիստ կրճատվել է հետագա տասնամյակների կոտորածների և գաղթի հետևանքով: Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին Դիարբեքիրի նահանգում բնակվում էին ավելի քան 130 հազ. հայեր:

Սեբաստիայի նահանգը՝ Օսմանյան կայսրության վարչատարածքային միավոր Արևմտյան Հայաստանում պատմական Փոքր Հայքի տարածքում: Վարչական կենտրոնը՝ Սեբաստիա (Սվագ): 19-րդ դարում վերջին ուներ 4 գավառ՝ Սեբաստիա (կենտրոնական գավառ), Շապին Գարահիսար, Եվլոկիա (Թոխաթ), Ամասիա, որոնք իրենց հերթին բաժանված էին 28 գավառակների: Սեբաստիայի նահանգում կար 4761 քաղաք ու գյուղ:

Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի տվյալներով՝ 1880-ական թվականներին Սեբաստիայի նահանգում և Կեսարիայի գավառում կար 670 հազար հայ (20-25 հազար գոհել է 1895-1896թթ. կոտորածների ժամանակ):

Մեծ Եղեռնի ժամանակ Սեբաստիայի նահանգի հայ բնակչությունը հիմնական մասը ոչնչացվել է Յալեպի ծանապարհին և Դեյր Էզ Զորում: Սեբաստիայի նահանգի 418 հազար հայերից փրկվել է ընդամենը 16800-ը:

Տրապիզոնի նահանգը՝ Օսմանյան կայսրության վարչատարածքային միավոր Սև ծովի հարավային ափին, Տրապիզոն կենտրոնով: Կազմավորվել է 1519-1520թթ.: Տրապիզոնի նահանգի սահմանները վերջնականապես ձևավորվել են 1878թ.՝ Աջարիան Ուսւսաստանին անցնելուց հետո: Տարածքը՝ 31,3 հազ. կմ² (այլ տվյալներով՝ 32,7հազ. կմ²): Ուներ 4 գավառ՝ Տրապիզոն, Լազիստան, Գյումուշխանն և Զանիկ: 1910-ին Զանիկը վերածվել է առանձին վարչամիավորի՝ «իմքնուրույն գավառի»:

Յայերը Տրապիզոնի նահանգի հնագույն բնակչություն են: Մինչև 18-րդ դարը նրանք զանգվածաբար ապրում էին նահանգի արևելյան և հարավային շրջաններում՝ Յամշենի (Յամանաշեն), Քելքիթի (Գայլգետ) և Սյուրմենի գավառներում, Տրապիզոնում, այլ քաղաքներում: 18-րդ դարում թուրք կոտորածների ու վայրագությունների հետևանքով համշենահայերի հիմնական մասը բռնի կրոնափոխվել է (1914թ. նշված տարածքում հաշվվում էին հարյուրավոր բնակավայրեր՝ 150-200 հազար մահմեդական հայ բնակչություն, որոնք պահպանել էին իրենց լեզուն և ազգային կենցաղը): 1895-1896թթ. կոտորածներից հետո Տրապիզոնի նահանգից սկիզբ է առել հայերի զանգվածային արտագաղթ Ուսւսական կայս-

*րություն: Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Տրապի-
զոնի նահանգում բնակվում էր շուրջ 100 հազ. հայ:*

*Տրապարակվող փաստաթղթերի համակողմանի ուսումնասիրությունը
տալիս է Արևմտյան Դայաստանում հայերի ցեղասպանության
նախապատրաստման և իրականացման հստակ պատկերը:*

*Առաջին համաշխարհային պատերազմը դեռ չսկսած Թուրքիայում
հայտարարվում է սեֆերբերլիկ՝ համընդհանուր զորահավաք, որին Են-
թակա էին ինչպես մահմերական, այնպես էլ քրիստոնյա բնակչությունը՝
այդ թվում հայերը: Զորակոչային տարիքի՝ 20-23 տարեկան տղամարդիկ
արդեն գտնվում էին բանակում, ուստի զորահավաքը սկսվեց 24-27 տա-
րեկան տղամարդկանցից, որին հետևեց մինչև 32 տարեկան հասակ ու-
նեցողները, ապա՝ մինչև 45: Դայ զինվորները ի սկզբանե գտնվում էին
շատ ծանր վիճակում, նրանք կատարում էին ամենածանր աշխատանք-
ները, Ենթարկվում ծաղր ու ծանակի, կրոնական բնույթի վիրավորան-
քների և տարբեր բռնությունների: 1914թ. աշնանը նրանց սկսում են զի-
նաթափել և տեղափոխվել «ամէլե թարուրի» (բանվորական գումար-
տակ):*

*1914թ. ամռանը իրականացված զորահավաքի պատճառով հայ
բնակչությունը մնաց անպաշտպան. տղամարդկանցից դատարկված
գյուղերում տեր ու տիրական դարձան թուրք պաշտոնյաները և ոստիկա-
ները: Նրանք «թեքեալիֆի հարրիե» կոչված պատերազմական տուրքի
անվան տակ սկսեցին թալանել հայ բնակչությանը, բռնագրավելով ա-
մեն ինչ՝ դրամ, ցորեն, գարի, ծավարեղեն, յուղ, պանիր, հաց, ոչխար, ե-
րինջ, գուլպա, ծեռնոց, տրեխ, խոտ, աթար, պարան, բուրդ, նավթ և այլն: Միաժամանակ բնակչությունը պարտավոր էր բանակին տալ նաև պա-
տերազմական նվիրատվություն կամ օգնություն՝ իանե, որը յուրաքանչ-
յուր գավառակի համար կազմում էր 200-ական թիթեղ դավուրմա և 250-
ական օխա (25 փութ) յուղ, իսկ յուրաքանչյուր գյուղի՝ 10-ական ոչխար,
նաև ցորեն, գարի, հարդ, խոտ:*

*Դավաքած հարկը, ինչպես նաև տարբեր ռազմական բեռներ տեղա-
փոխելու պարտականությունը, որը ուներ օլամ անունը, հիմնականում
դրված էր հայ բնակչության վրա: Ոչ զինվորացուները, այսինքն՝ 45 տա-
րեկաններից բարձր տղամարդիկ, անգամ կանայք, «կրօնակնին ցորեն,
գարի, փամփուշտ և այլն բեռցուցած», խորը ծյան միջով, շարժվում էին
ռազմածակատ:*

Սակայն աղետը մոտենում էր: Թուրքական իշխանությունները իրենց ծրագիրը իրականացնելու համար նախ զինում են մահմեդական բնակչությանը և ժեմի ու խոշտանգումների միջոցով հայերի ձեռքից հավաքում են գենքերը:

Դայ բնակչության ոչնչացման ծրագրերի մասին, դեռևս ինքնապաշտպանական կողմների ընթացքում, հայկական կողմի ձեռքն են ընկել որոշակի պաշտոնական փաստաթղթեր:

Դրապարակվող փաստաթղթերը անվերապահորեն վկայում են հայ բնակչության ոչնչացման թուրքական ծրագրի առաջին կետի՝ հայ արական բնակչության խսպառ ոչնչացման իրողությունը: Նաև մանրամասն տվյալներ են ներկայացնում հայ բնակչության ջարդերի ընթացքում գործադրված տանջանքների մասին՝ շատերին ողջ-ողջ մորթազերծ են արել կամ մորթը աքցանով, շամփուրով պլոկել, մարմնի անդամները հատել, մի մասին այրել և այլն: Մասնավոր խստություն են գործադրել կրոնավորների նկատմամբ, քահանաներին սաստիկ տանջելով սպանել են, մորթքը պոկել կամ խանձել, աչքերը կուրացրել, լեզուն ու քիթը կտրել և այլն: Մարդկանց ոչնչացնելու համար գործ են ածվել հնարավոր ամեն միջոց՝ հրացան, սվին, սուր, դաշույն, կացին, եղան, մանգաղ, բահ, պարան, քար, անդունդ նետել, գետում խեղել, այրել, կենդանի թաղել:

Դրատարակվող փաստաթղթերի շնորհիվ նաև հայտնի են դառնում ջարդերի կազմակերպիչների և իրականացնողների անունները:

Թուրքական ծրագրի հաջորդ կետը հայ կանանց և մանուկներին մահմեդականցումն էր, և որոշ վայրերում դա նրանց հաջողվել է: Կոտորածի առաջին օրերի, սարսափների ազդեցության տակ, ոմանք գնացել են այդ քայլին, սակայն շատ-շատերը մահը գերադասել են կրոնափոխությունից:

Դայկական շատ վայրերի բնակիչներ օրիասական մարտեր են մղել թուրքական կանոնավոր զինված ուժերի և հազարավոր կատաղած խուժանի դեմ: Որոշ դեպքերում ինքնապաշտպանության շնորհիվ հայ բնակչության մի մասին հաջողվում է փրկվել թուրքական ջարդերից: Ինքնապաշտպանության են դիմել ինչպես խմբերով, այնպես էլ անհատապես: Նշանավոր է Սասունի ինքնապաշտպանությունը, որտեղ հայ մարտիկները ցույց տվեցին խիզախության և անձնագործության փայլուն օրինակներ: Միշտ չեն, որ ինքնապաշտպանները հասել են հաջողության: Դաճախ ռազմամթերքի պակասի պատճառով նրանք մարտերով նահանջել են կամ կոտորվել են մյուս բնակիչների հետ միասին:

Անհրաժեշտ է նաև անրադառնալ մի կարևոր խնդրի: Արդյո՞ք մահմեդական ողջ բնակչությունն է մասնակցել ջարդերին, թե՞ նրանց մեջ եղել են ազնիվ մարդիկ, որոնք չեն մասնակցել հայ բնակչության ոչնչացմա-

Աղ, փրկել են իրենց հարևանի, համագյուղացու կյանքը, կամ ընդդիմացել են իշխանությունների հայացինց քաղաքականությունը։ Այդպիսիները եղել են, և վերապրածները չեն մոռացել նրանց։

Ժողովածուում հրատարակված փաստաթղթերը վկայում են, որ հայերի կոտորած հիմնականում իրականացվել է քրդերի ձեռքով, թեպետ առանձին դեպքերում մասմակցություն են ունեցել նաև թուրքերն ու չերքեզները։

Թուրքական իշխանությունների հայացինց քաղաքականությունը բոլոր նահանգներում հիմնականում նույն ձեռագիրն ուներ։ Սկզբից ձերքակալում էին նշանավոր մարդկանց և այլ վայր տեղափոխելու անվան տակ ճանապարհների մոտակայքերում, աչքից հեռու վայրերում ոչնչացնում, ապա հերթը հասնում էր մյուս տղամարդկանց, հետո էլ կանանց ու երեխաններին։

Ժողովածուում տեղ են գտել նաև հույն, ասորի, թուրք, պարսիկ ականատեսների վկայություններ թուրքական իշխանությունների կողմից հայքնակչության զանգվածային բնաջնջման փաստերի մասին։

Փաստուեն, առաջին անգամ հրապարակվում են փաստաթղթեր, որոնք արտացոլում են 1915թ. հայոց ցեղասպանության ողջ պատկերը Արևմտյան Հայաստանի նահանգներում։ Միաժամանակ դրանց հետ զուգահեռ հրատարակվող փաստաթղթերի մի խմբաքանակը լիարժեք կերպով արտացոլում է այդ նահանգներում կազմակերպված հայոց ինքնապաշտպանությունը, որի շնորհիվ փրկվեց Վանի, Մուշի, Սասունի հայքնակչության մի մասը։

Վկայությունները ականատեսներից հավաքվել են ջարդերից և տեղահանությունից ընդամենը մեկ տարի ամց, ուստի, և մեծ է դրանց հավաստիությունը և վավերակայնությունը, հետևաբար նաև դրանց արժեքը հայոց Սեծ եղեռնի համակողմանի ուսումնասիրման համար։

Ժողովածուն ունի հույժ պատմական, այսօր արդեն քաղաքական արժեք և նշանակություն, քանզի մեկ անգամ ևս ապացուցում է, որ երիտթուրքերի վարչակարգի կողմից իրականացրած հայոց ցեղասպանությունը եղել է նախօրոք ծրագրված և նախապատրաստված։